ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-3

ք.Երևան «25» Հոյեմբերի 2019թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ադամյանի (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքներ (1-ին փուլ 3-րդ մաս) աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **424 085 000 (Չորս հարյուր քսանչորս միլիոն ութսունհինգ հազար)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից

գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 2,.1, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Մերձմոսկովյան» ԲԲԸ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ՀՀ, Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն 2601
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ինեկոբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 2050122011531001
Հ/Հ 900011028363	ՀՎՀՀ 05800698
ՀՎՀՀ 02647057	
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ՝	«Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի տնօրեն՝
Է.Գևորգյան	Ա.Ադամյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«25» Հոկտեմբերի 2019թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-3 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

CPV - 45451700-4

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 2/14 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ (1-ԻՆ ՓՈՒԼ 3-ՐԴ ՄԱՍ) ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Համաշինարարական մաս, Ա մաս				
1	III կարգի գրունտի մշակում էքսկավատորով, բարձելով ավտոմեքենաների վրա	խմ	12105	0.71	8,537.73
2	Բարձված գրունտի տեղափոխում 1կմ	տն	20578.5	0.87	17,934.56
3	Մեքենայացված հարթեցնում III կարգի գրունտներում	քմ	3800	0.18	698.46
4	Մակերեսների հարթեցում III կարգի գրունտներում ձերքով	քմ	3800	0.22	850.73
5	Հողի խտացնում, 25սմ շերտի հաստությունով առանձ խոնավացնելու, 6 անցումով	խմ	950	0.15	143.82
6	Խճային հիմքի իրականացում 10 սմ, հարթեցումով և տոփանումով	խմ	128	8.77	1,121.99
7	Բետոնե նախապետրաստական շերտի B7,5	խմ	128	34.07	4,361.27
8	Ե/բ հիմնային հեծանի իրականացում B 25 դասի բետոնով	խմ	76.2	78.47	5,979.62
9	Ամրան Ac1	տն	2.3934	434.49	1,039.90
10	Ամրան A500c	տն	5.504	431.50	2,374.96
11	Ե/բ հիմնային սալի իրականացում B 25 դասի բետոնով	խմ	285.6	57.11	16,311.64
12	Ամրան A500c	տն	23.9301	431.50	10,325.76
13	Ե/բ սյունակալների իրականացում B25 դասի	խմ	23.8	81.94	1,950.13
14	Ամրան Ac1	տն	0.7405	434.49	321.74
15	Ամրան A500c	տն	5.504	431.50	2,374.96
16	Մետաղական խարիսխների տեղադրում 1 մ երկարությամբ	տն	1.206	383.31	462.27
17	Մետաղական խարիսխ	տն	1.206	479.85	578.70
18	Հենապատերի իրականացում ե/բետոնով B25 դասի 20 սմ հաստությամբ	խմ	57.9	114.52	6,630.64
19	Ամրան Ac1	տն	0.14	434.49	60.61
20	Ամրան A500c	տն	6.62	431.50	2,854.35
21	Ջրամեկուսացում 1 շերտ իզոգամով	քմ	1727.82	2.46	4,255.83
22	Սեյսմիկ կարերում փրփրապոլիստիրոլով տեղադրում 10սմ, 2x5սմ երկու կողմից	քմ	89.32	4.96	443.41
23	Սեյսմիկ կարերում փրփրապլաստի տեղադրում 20սմ	խմ	17.864	34.38	614.16
	Համաշինարարական մաս, Բ մաս			-	-

1	Ե/բ հիմնային հեծանի իրականացում B 25 դասի բետոնով	խմ	87.5	78.47	6,866.36
2	Ամրան Ac1	տն	2.712	434.49	1,178.33
3	Ամրան A500c	տն	6.377	431.50	2,751.66
4	Խճային հիմքի իրականացում 10 սմ, հարթեցումով և տոփանումով	խմ	141	8.77	1,235.94
5	Բետոնե նախապետրաստական շերտի B7,5	խմ	141	34.07	4,804.21
6	Ե/բ հիմնային սալի իրականացում B 25 դասի բետոնով	խմ	314.5	57.11	17,962.22
7	Ամրան A500c	տն	26.9971	431.50	11,649.16
8	Ե/բ սյունակալների իրականացում B25 դասի	խմ	23.8	81.94	1,950.13
9	Ամրան Ac1	տն	0.5924	434.49	257.39
10	Ամրան A500c	տն	1.6203	431.50	699.15
11	Մետաղական խարիսխների տեղադրում 1 մ երկարությամբ	տն	1.206	383.31	462.27
12	Մետաղական խարիսխ	տն	1.206	479.85	578.70
13	Հենապատերի իրականացում ե/բետոնով B25 դասի 20 սմ հաստությամբ	խմ	57.9	114.52	6,630.64
14	Ամրան Ac1	տն	0.10	434.49	43.97
15	Ամրան A500c	տն	5.89	431.50	2,540.39
16	Ջրամեկուսացում 1 շերտ իզոգամով	քմ	1664.4	2.46	4,099.62
17	Սեյսմիկ կարերում փրփրապոլիստիրոլով տեղադրում 10սմ, 2x5սմ երկու կողմից	քմ	70.4	4.96	349.49
18	Սեյսմիկ կարերում փրփրապլաստի տեղադրում 20սմ	խմ	14.08	34.38	484.07
	Համաշինարարական մաս, Գ մաս			-	-
1	Ե/բ հիմնային հեծանի իրականացում B 25 դասի բետոնով	խմ	54.1	78.47	4,245.37
2	Ամրան Ac1	տն	1.672	434.49	726.46
3	Ամրան A500c	տն	3.913	431.50	1,688.45
4	Խճային հիմքի իրականացում 10 սմ, հարթեցումով և տոփանումով	խմ	87.2	8.77	764.36
5	Բետոնե նախապետրաստական շերտի B7,5	խմ	87.2	34.07	2,971.12
6	Ե/բ հիմնային սալի իրականացում B 25 դասի բետոնով	խմ	193	57.11	11,022.92
7	Ամրան A500c	տն	16.44	431.50	7,093.81
8	Ե/բ սյունակալների իրականացում B25 դասի	խմ	12.7	81.94	1,040.61
9	Ամրան Ac1	տն	0.387	434.49	168.15
10	Ամրան A500c	տն	1.059	431.50	456.96
11	Մետաղական խարիսխների տեղադրում 1 մ երկարությամբ	տն	0.788	383.31	302.05
12	Մետաղական խարիսխ	տն	0.788	479.85	378.12
13	Հենապատերի իրականացում ե/բետոնով B25 դասի 20 սմ հաստությամբ	խմ	35.8	114.52	4,099.77
14	Ամրան Ac1	տն	0.07	434.49	32.15
15	Ամրան A500c	տն	4.26	431.50	1,836.45

16	Ջրամեկուսացում 1 շերտ իզոգամով	քմ	1057	2.46	2,603.52
17	Սեյսմիկ կարերում փրփրապոլիստիրոլով տեղադրում 10սմ, 2x5սմ երկու կողմից	քմ	59	4.96	292.90
18	Սեյսմիկ կարերում փրփրապլաստի տեղադրում 20սմ	խմ	11.8	34.38	405.68
	Համաշինարարական մաս, Դ մաս			-	-
1	Ե/բ հիմնային հեծանի իրականացում B 25 դասի բետոնով	խմ	38.5	78.47	3,021.20
2	Ամրան Ac1	տն	1.1902	434.49	517.13
3	Ամրան A500c	տն	2.795	431.50	1,206.03
4	Խճային հիմքի իրականացում 10 սմ, հարթեցումով և տոփանումով	խմ	55.1	8.77	482.98
5	Բետոնե նախապետրաստական շերտի B7,5	խմ	55.1	34.07	1,877.39
6	Ե/բ հիմնային սալի իրականացում B 25 դասի բետոնով	խմ	120.2	57.11	6,865.05
7	Ամրան A500c	տն	10.2271	431.50	4,412.96
8	Ե/բ սյունակալների իրականացում B25 դասի	խմ	12	81.94	983.26
9	Ամրան Ac1	տն	0.6345	434.49	275.68
10	Ամրան A500c	տն	0.9971	431.50	430.25
11	Մետաղական խարիսխների տեղադրում 1 մ երկարությամբ	տն	0.742	383.31	284.42
12	Մետաղական խարիսխ	տն	0.742	479.85	356.05
13	Հենապատերի իրականացում B25 դասի 20 սմ հաստությամբ	խմ	28.9	114.52	3,309.59
14	Ամրան Ac1	տն	0.0611	434.49	26.55
15	Ամրան A500c	տն	3.459	431.50	1,492.55
16	Ջրամեկուսացում 1 շերտ իզոգամով	քմ	687	2.46	1,692.16
	Համաշինարարական մաս, ՊԱՀԵՍՏԱՆՅԻՆ ՄԱՍ			-	-
1	III կարգի գրունտի մշակում էքսկավատորով, բարձելով ավտոմեքենաների վրա	խմ	3056	0.71	2,155.41
2	Բարձված գրունտի տեղափոխում 1կմ	տն	5195.2	0.87	4,527.72
3	Մեքենայացված հարթեցնում III կարգի գրունտներում	խմ	1100	0.18	202.19
4	Մակերեսների հարթեցում III կարգի գրունտներում ձերքով	տն	1100	0.22	246.26
5	Հողի խտացնում, 25սմ շերտի հաստությունով առանձ խոնավացնելու, 6 անցումով	խմ	275	0.29	78.47
6	Խճային հիմքի իրականացում 10 սմ, հարթեցումով և խտացումով	խմ	120	8.77	1,051.87
7	Բետոնե նախապետրաստական շերտի B7,5	խմ	106	34.07	3,611.68
8	Ե/բ հիմնային հեծանի իրականացում B 25 դասի բետոնով	խմ	71.4	78.47	5,602.95
9	Ամրան Ac1	տն	2.194	434.49	953.27
10	Ամրան A500c	տն	5.16	431.50	2,226.52

11	Ե/բ հիմնային սալի իրականացում B 25 դասի բետոնով	խմ	233.6	57.11	13,341.73
12	Ամրան A500c	տն	19.976	431.50	8,619.58
13	Ե/բ սյունակալների իրականացում B25 դասի	խմ	13.8	81.94	1,130.75
14	Ամրան Ac1	տն	0.3797	434.49	164.98
15	Ամրան A500c	տն	1.218	431.50	525.56
16	Մետաղական խարիսխների տեղադրում 1 մ երկարությամբ	տն	0.77	383.31	295.15
17	Մետաղական խարիսխ	տն	0.77	479.85	369.49
18	Հենապատերի իրականացում ե/բետոնով B25 դասի 20 սմ հաստությամբ	խմ	26.22	114.52	3,002.68
19	Ամրան Ac1	տն	0.06	434.49	27.81
20	Ամրան A500c	տն	3.98	431.50	1,715.20
21	Ջրամեկուսացում 1 շերտ իզոգամով	քմ	1382.18	2.46	3,404.47
22	Հատակի ե/բ սալի իրականացում B 25 դասի բետոնով	խմ	148.56	57.11	8,484.79
23	Ամրան A500c	տն	19.60	431.50	8,457.34
	Էլեկտրատեխնիկական մաս			-	-
1	ԼԵՏ ենթակայանի մոնտաժում	կ-տ	1.000	129.24	129.24
*1**	*ԼԵՏ ենթակայան 250ԿՎԱ հզորությամբ /արժեքը/*	*կ-պ*	*1*	*3,379.22*	*3,379.22*
2	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք	մ3	308.20	0.57	176.96
3	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով, բարձելով ա/ինքնաթափերի վրա	մ3	132.2	0.70	92.55
4	Ավելորդ գրունտի տեղափոխում 1կմ	տն	224.740	0.87	195.87
5	Խրամուղու հետլիցք տեղի փափուկ գրունտով բուլդոզերով տոփանումով	մ3	308.200	0.34	104.25
6	Խճի շերտի պատրաստում 100մմ հաստ.	մ3	55.000	13.84	761.28
7	Ավազի շերտի պատրաստում 150մմ հաստ.	մ3	82.60	4.79	395.35
8	Խողովակաշարի անցկացում ՊՎՔ խողովակներից Φ100x8մմ	գմ	404.000	4.56	1,842.59
9	Խողովակաշարի անցկացում ՊՎՔ խողովակներից Φ50x5մմ	գմ	1954.000	1.39	2,723.95
18	Խրամուղու մշակում 3-րդ կարգի գրունտում ձեռքով /հողանցման համար/	մ3	40.50	2.19	88.60
19	Խրամուղու հետլիցք տեղի փափուկ գրունտով ձեռքով տոփանումով	մ3	40.500	0.91	37.05
20	4x40մմ ցինկապատ պողպատե հաղորդաթիթեղի տեղադրում	գմ	300.00	1.05	314.96
21	70x70x5մմ,L=2,5մ ցինկապատ պողպատե անկյունակի տեղադրում	հատ	62	7.83	485.42
22	Խճի շերտի պատրաստում 100մմ հաստ.	մ3	55.00	13.84	761.28
23	Ավազի շերտի պատրաստում 150մմ հաստ.	մ3	390.00	4.79	1,866.66
24	Պոլիմերավազային դիտահորի տեղադրում կափարիչով	հատ	3.000	74.03	222.10

25	АПвП 3x120մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	գմ	770.000	11.47	8,831.41
26	ВВГ-LS-3x1,5մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	գմ	1400.000	0.62	871.18
27	ВВГ-LS-5x1,5մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	գմ	1500.00	1.11	1,667.58
28	ВВГ-LS-5x2,5մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	գմ	300.00	1.39	417.42
29	ВВГ-LS-5x4մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	գմ	245.0	2.02	495.07
30	ВВГ-LS-5x6մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	գմ	340.0	2.65	901.00
31	Հաղորդալարի միացման ամրակ3/4/x7 տեղանոց մեկուսացված	հատ	90.0	0.03	3.08
	Ընդամենը /հազ. դր./				**315,713.81**
	Շահույթ 11%				**34,728.52**
	Ընդամենը /հազ. դր./				**350,442.33**
	Սարքավորումներ*				**3,379.22**
	Ընդամենը /հազ. դր./				**353,821.55**
	ԱԱՀ 20%				**70,764.31**
	Ընդամենը /հազ. դր./				**424,585.86**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011028363
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մերձմոսկովյան» ԲԲԸ
ՀՀ, Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն 2601
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050122011531001
ՀՎՀՀ 05800698

«Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի տնօրեն՝

Ա.Ադամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«25» հոկտեմբերի 2019թ. Հավելված թիվ 2
կնքված ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-3 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 2/14 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ (1-ԻՆ ՓՈՒԼ 3-ՐԴ ՄԱՍ) ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքներ (1-ին փուլ 3-րդ մաս) աշխատանքներ	Պպայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011028363
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
L.S

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մերձմոսկովյան» ԲԲԸ
ՀՀ, Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն 2601
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050122011531001
ՀՎՀՀ 05800698

«Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի տնօրեն՝

Ա.Ադամյան
(ստորագրություն)
L.S

«25» Հոկտեմբերի 2019թ. Հավելված թիվ 2.1
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-3 ծածկագրով պայմանագրի

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 2/14 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ (1-ԻՆ ՓՈՒԼ 3-ՐԴ ՄԱՍ) ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Կապալի օբյեկտի շահագործման երաշխիքային ժամկետ				
հ/հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1.	Ե/բ հիմնային սալի իրականացում B 25 դասի բետոնով	մ³	Ե/բ հիմնային սալի իրականացում B 25 դասի բետոնով	50 տարի
2.	Ե/բ սյունակալների իրականացում B25 դասի	մ³	Ե/բ սյունակալների իրականացում B25 դասի	50 տարի
3.	Հենապատերի իրականացում ե/բետոնով B25 դասի 20 սմ հաստությամբ	մ³	Հենապատերի իրականացում ե/բետոնով B25 դասի 20 սմ հաստությամբ	50 տարի
4.	Ե/բ հիմնային հեծանի իրականացում B 25 դասի բետոնով	մ³	Ե/բ հիմնային հեծանի իրականացում B 25 դասի բետոնով	50 տարի
5.	ԼԵՏ ենթակայան 250ԿՎԱ հզորությամբ /արժեքը/	Կ-տ	ԼԵՏ ենթակայան 250ԿՎԱ հզորությամբ /արժեքը/	10 տարի
6.	ԱՊՎՊ 3x120մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	գմ	ԱՊՎՊ 3x120մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	25 տարի
7.	ВВГ-LS-3x1,5մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	գմ	ВВГ-LS-3x1,5մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	25 տարի
8.	ВВГ-LS-5x1,5մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	գմ	ВВГ-LS-5x1,5մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	25 տարի
9.	ВВГ-LS-5x2,5մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	գմ	ВВГ-LS-5x2,5մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	25 տարի
10.	ВВГ-LS-5x4մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	գմ	ВВГ-LS-5x4մմ2 կտրվածքով մալուխի անցկացում	25 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011028363
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մերձմոսկովյան» ԲԲԸ
ՀՀ, Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն 2601
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050122011531001
ՀՎՀՀ 05800698

«Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի տնօրեն՝

Ա.Ադամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«25» Հոկտեմբերի 2019թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի												
				Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019 թ. պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	5112	45451700-4	Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքներ (1-ին փուլ 3-րդ մաս)											424 085 000	424 085 000	**424 085 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ԳՀՍ 900011028363
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝
Է.Գևորգյան
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մերձմոսկովյան» ԲԲԸ
ՀՀ, Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն 2601
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050122011531001
ՀՎՀՀ 05800698
«Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի տնօրեն՝
Ա.Ադամյան
(ստորագրություն)

Հավելված թիվ 4
« 25 » Հոկտեմբերի 2019թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«25» Հոկտեմբերի 2019թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն